[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
7	Մայիս	2019 թ.		Բ	5543261313
[4] Առաքման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
7	Մայիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Հարկ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկի	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 71100719բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

07/05/2019 14:40:38

ՈՐՈՇՈՒՄ

ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

15 մարտի, 2019թ.

ք. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Լ.Բ. Պառավյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ 71100719 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղ. 14/16 բնակարանի բնակչուհի Ինգա Մհերի Ղազարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստվող նյութերով տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2019 թվականի հունվարի 7-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղ. 14/16 բնակարանում, Հարութ Արմենի Հարությունյանը Ինգա Ղազարյանի նկատմամբ կատարել է բռնի գործողություններ, որի արդյունքում Ինգա Ղազարյանը զգացել է ֆիզիկական ցավ:

Դեպքի առթիվ ոստիկանության Բազումի բաժնում 2019 թվականի հունվարի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 71151319 քրեական գործը:

2019 թվականի հունվարի 17-ին թիվ 71151319 քրեական գործն ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն և ընդունվել վարույթ:

Բացի այդ, 2019 թվականի հունվարի 8-ին Հարութ Ալեքսանյանի նկատմամբ ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքում կայացվել է անհետաձգելի միջամտության որոշում, որի համաձայն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով Հարութ Ալեքսանյանին պարտավորեցվել է, որ 70 մետրից ավել չմոտենա Ինգա Ղազարյանին, հեռախոսային, նամակագրական և կապի այլ միջոցներով չանհանգստացնի նրան: Սահմանափակումների ժամկետ է սահմանվել 20 օր:

2019 թվականի հունվարի 11-ին՝ ժամը 21:40-ին, Ինգա Ղազարյանի ահազանգի վերաբերյալ նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ Հարութ Ալեքսանյանը 2019 թվականի հունվարի 11-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, դիտավորությամբ խախտել է հիշյալ որոշման պահանջները, այցելել է Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս 14/16 հասցեում գտնվող՝ Ինգա Ղազարյանին պատկանող բնակարան:

Դեպքի առթիվ ոստիկանության Բազումի բաժնում 2019 թվականի հունվարի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 71151619 քրեական գործը:

2019 թվականի հունվարի 22-ին թիվ 71151619 քրեական գործն ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն և ընդունվել վարույթ:

2019 թվականի հունվարի 22-ին որոշում է կայացվել թիվ 71151319 և թիվ 71151619 քրեական գործերը մեկ վարույթում միավորելու [illegible]

Բացի այդ, Վանաձոր քաղաքի Աղյուսագործների 9 հասցեի բնակչուհի Սուսաննա Թորոսյանի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով տվյալներ են ստացվել, որ ինքնությունը չպարզված անձը 2019 թվականի փետրվարի 11-ի՝ժամը 19-ից մինչև փետրվարի 12-ը՝ ժամը 09-ն ընկած ժամանակահատվածում, տեխնիկական միջոցների գործադրմամբ բնակարանի 2-րդ հարկի պատշգամբի դուռը բացելու միջոցով ապօրինի մուտք է գործել Աիդա Թումանյանին պատկանող՝ Վանաձոր քաղաքի Աղյուսագործների 16-1 հասցեի բնակարան և այնտեղից գաղտնի հափշտակել զգալի չափերով, ընդհանուր 200.000 ՀՀ դրամ արժեքով էլեկտրական մսաղաց և թեյնիկ, ծածկոցներ և կենցաղային այլ պարագաներ:

Դեպքի առթիվ 2019 թվականի փետրվարի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդհոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 71100719 քրեական գործը:

2019 թվականի փետրվարի 13-ին որոշում է կայացվել թիվ 71151319 և թիվ 71100719 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և նախաքննություն թիվ 71100719 քրեական գործի համարով կատարելու մասին:

Աիդա Թումանյանի բնակարանից գողություն կատարելու կասկածանքով 2019 թվականի փետրվարի 12-ին Ֆրունզե Ալոյանը և Հարութ Ալեքսանյանը ձերբակալվել են:

2019 թվականի փետրվարի 14-ին Ֆրունզե Ալոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով:

2019 թվականի փետրվարի 14-ին Հարութ Ալեքսանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Նույն օրը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից որոշում է կայացվել մեղադրյալ Հարութ Ալեքսանյանի և Ֆրունզե Ալոյանի մասնակցությամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին և նույն օրը նրանք տեղափոխվել են ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿ հիմնարկ:

Նախաքննության ընթացքում ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր ՊՓԲ ընկերությունից ստացված գրության համաձայն Ֆրունզե Ալոյանը տառապում է <<Պրիմիտիվ անձ՝ էմոցիոնալ անկայունությամբ>> ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ Ֆրունզե Ալոյանի հոգեկան վիճակի և քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, 243-244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ փորձագետներին:

2. Փորձագետներին ներկայացնել մեղադրյալ Ֆրունզե Ալոյանին, իսկ քրեական գործի նյութերը և փորձաքննության լիարժեքության ապահովման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը կտրամադրվեն փորձաքննության ընթացքում:

3. Փորձագետներին պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.

- Ֆրունզե Ալոյանի մոտ նախկինում, դեպքի ժամանակ և ներկայումս առկա՞ է արդյոք որևէ քրոնիկ հոգեկան հիվանդություն, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, տկարամտություն կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակ, թե՞ ոչ,
- եթե Ֆրունզե Ալոյանը հանցագործությունը կատարելու պահին տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ գտնվել է ժամանակավոր հոգեկան խանգարման մեջ, ապա հիվանդությունը կամ վիճակը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողությունների բնույթը գիտակցելու, այդ գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, թե՞ ոչ, հակադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ,
- Ֆրունզե Ալոյանը հանցագործությունը կատարելու պահին գտնվե՞լ է արդյոք անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակության վիճակում, ներկայումս մեղսունակ կամ սահմանափակ մեղսունա՞կ է, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հաստատությունում, և արդյոք այդ բուժումը հակացուցվա՞ծ չէ նրան,
- Ֆրունզե Ալոյանը վտանգավո՞ր է արդյոք հասարակության և շրջակա միջավայրի համար, թե՞ ոչ, նրա հոգեկան վիճակը խոչընդոտո՞ւմ է նրա մասնակցությանը քրեական գործով վարույթին (նախաքննությանը և դատաքննությանը), թե՞ ոչ:

4. Փորձագետին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ **Լ.Բ. Պառավյան**